

239

ԹԻԼ 27178  
Փետրուար 18, 1981

Արժանաշնորհ  
Տ. Կարապետ Քհնյ. Քոչարեան  
Հովիւ Ս. Փրկիչ Եկեղեցւոյ  
Նախագահ Ժխական Խորհուրդի  
Ուսար.

Սիրելի Տէր Կարապետ,

Ստացած ենք Փետրուար 2, 1981 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ ձեր նախագահութեամբ Յունուար 25ին գումարուած համայնքիդ ժխական ժողովին մէջ կատարուած է ժխական Խորհուրդի հինգ անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք ժխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան ղրկել ժխական Խորհուրդի նորընտիր Դիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով ժխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւնը համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Լուծվիկ Ճէրի Ստեփանեան  
Արթր Նաղճեան  
Ասպետ Զարբեան  
Գէնէթ Գրիգորեան  
Տիկ. Մէրիըն Ահարոնեան